23.05.24 - 24.05.24
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ պատմության ֆակուլտետ

Ս.թ. մայիսի 23-ին և 24-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետում կանցկացվի միջազգային գիտաժողով՝ նվիրված 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատմությանը:

Գիտաժողովի շրջանակում ներկայացվող զեկուցումները պետք է ընդգրկեն հետևյալ թեմաները.

- 1920 թ. թուրք-հայկական պատերազմի պատճառները,
- հայ-թուրքական հարաբերությունները 1918-1921 թթ.,
- ռազմական գործողությունների առանձնահատկությունները,
- պատերազմի լուսաբանումը հայկական և օտար մամուլում,
- պատերազմում պարտության պատճառները,
- պատերազմի հետևանքները,
- թուրք-հայկական պատերազմը և Հայաստանի խորհրդայնացումը,
- թուրք-հայկական պատերազմի ազդեցությունը հայկական ինքնության վրա (հայրենիքում և Սփյուռքում),
- երրորդ պետությունների (Ռուսաստան, Վրաստան, Ադրբեջան, Արևմտյան երկրներ) դիրքորոշումը պատերազմի ժամանակ,
- թուրք-հայկական պատերազմի համեմատությունը ժամանակաշրջանի այլ պատերազմների հետ,
- թուրք-հայկական պատերազմի պատմագրությունը (հայկական, թուրքական, ռուսական և այլն)։

Մասնակիցներն իրենց զեկուցումների հայտերը (զեկուցման վերնագիրը, ամփոփագիրը (մինչև 300 բառ) և հեղինակի հակիրճ կենսագրությունը) **մինչև ս.թ. ապրիլի 10-ը** պետք է ուղարկեն՝ լրացնելով առցանց հայտադիմումը։

Գիտաժողովի հայտերի ընտրության արդյունքները կհրապարակվեն **ս.թ. ապրիլի 25-ին**:

Գիտաժողովում հնչած զեկուցումները կհրապարակվեն գիտական հոդվածների առանձին ժողովածուում։

Հրատարակության համար զեկուցումների հիման վրա գրված հոդվածներն անհրաժեշտ է conferencehistory@ysu.am էլհասցեին ուղարկել **մինչև ս.թ. հունիսի 20-ը**:

Հոդվածները տպագրվելու են բացառապես «Պատմություն և մշակույթ» հանդեսի սկզբունքներին համաձայն (միայն գրախոսականն ուղարկելուց հետո՝ համապատասխանելով հանդեսի չափորոշիչներին)։

Հավելյալ հարցերի դեպքում կապ հաստատել հետևյալ էլհասցեի միջոցով՝ conferencehistory@ysu.am։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am